

Արմեն Յ.Մարության
Պատմ. գիյր. թեկնածու

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԲԱՆԱԶԵՎԻ ԴԱՍԵՐԸ

Եվրոպական խորհրդարանի 1987 թ. հունիսի 18-ի որոշման
25-ամյակի առիթով*

Մուտք

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում կարևոր նշանակություն ունեն միջազգային պաշտոնական կազմակերպությունների կողմից այդ հանցագործությանը տրված գնահատականները, որոնցից առանձնահատուկ է 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանի ընդունած՝ «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ այս փաստաթղթում ամկա ձևակերպումներն ու գնահատականները նախապես ծավալված բուռն քննարկումների անմիջական հետևանքն էին: Ուստի տարիների հեռավորությունից նպատակահարմար ենք գտնում **վերհիշել** փաստաթղթի ընդունման պատմական ընթացքը՝ **արժևորելու** համար այն օգտակար դասերը, որոնք կարող ենք քաղել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում:

1. Բանաձևի ընդունման նախապատմությունը

Դեռևս 1970-80-ական թվականներից ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման ու պաշտպանության ենթահանձնաժողովում Հայոց ցեղասպանության շուրջ ծավալված քննարկումներում ու դրանց արդյունքում ընդունված երկու զեկուցումներում այդ հանցագործությանը տրված գնահատականները բարերար ազդեցություն ունեցան եվրոպական պաշտոնական կառույցներից մեկում՝ Եվրախորհրդարանում «Հայկական հարցի քաղա-

* Հղվածն ընդունվել է տպագրության 15.11.2012:

Գ (Ժ) ցարի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012
ՎԷՄ համահայկական հանդես

քական լուծման մասին» բանաձևի ընդունման վրա:

Պետք է նշել, որ դեռևս 1981 թ. Եվրախորհրդարանի 20 անդամներ առաջարկել էին բանաձև ընդունել հայերի դրության վերաբերյալ: Բանաձևի նախագծում խորհրդարանականները արձանագրում էին, որ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը շարունակում է տարբեր բնույթի ճնշումների ենթարկվել թուրքական կառավարության կողմից, ուստի փաստաթղթում առկա էր թուրքական կառավարությանն ուղղված պահանջ՝ դադարեցնել մարդու իրավունքների խախտումները իր պետության տարածքում¹:

1983 թ. սեպտեմբերի 19-ին սոցիալիստների խմբակցության անունից Եվրախորհրդարան ներկայացվեց Պաուլա Դյուպորի (Ֆրանսիա) և Էռնստ Գլինի (Բելգիա) «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի նախագիծը, որը 1984 թ. հունվարի 22-ին քննարկվեց Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերի հանձնաժողովի նիստում: Նրանում մասնավորապես նշվում էր, որ Եվրախորհրդարանը Եվրամիության նախարարների խորհրդից պահանջում է ձանաչել Հայոց ցեղասպանությունը, հասնել այն բանին, որ ՄԱԿ-ը ևս ընդունի բանաձև, ու ձնշում գործադրել թուրքական կառավարության վրա 1915 թ. ցեղասպանության պատմական փաստն ընդունելու նպատակով, հասկացնելով վերջինիս, որ թուրք-հայկական խնդրի արդարացի ու հիմնավոր լուծումը հնարավոր է միայն քաղաքական երկխոսության միջոցով²:

Քննարկումների ժամանակ հանձնաժողովի որոշ անդամներ առաջարկեցին հարցն ընդգրկել նաև Թուրքիայի վերաբերյալ Եվրախորհրդարանին ներկայացվելիք ընդհանուր զեկույցի մեջ, սակայն Թուրքիային սատարող ԳՖՀ պատգամավորների ջանքերով հանձնաժողովը հետաձգեց բանաձևի նախագծի քննարկումը մինչև 1984 թ. հունիսը՝ խորհրդարանական ընտրությունների ավարտը³:

1984 թ. հոկտեմբերի 13-ին սոցիալիստական խմբակցության նախագահ Անրի Սաբին (Ֆրանսիա), Քաղաքական հարցերի հանձնաժողովի փոխնախագահ տիկին Ժիզել Շարզատը, Էռնստ Գլինը և ուրիշներ կրկին Եվրախորհրդարանի քննարկմանն են ներկայացնում «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի նախագիծը, ինչը հոկտեմբերի 23-ին Եվրախորհրդարանը կրկին փոխանցում է Քաղաքական հարցերով հանձնաժողովին: Ի տարբերություն նախորդ նախագծի, սոցիալիստների նոր նախագծում ներառված էին բանաձևի ընդունման անհրաժեշտության ավելի ընդարձակ հիմնավորումներ: Փաստաթղթում արձանագրվում էր, որ հայ ժողովուրդը զրկված է իր պատմական արմատներից, քանզի թուրքական կառավարությունը հրաժարվում է ձանաչել 1915 թ. ցեղասպանությունը: Նոր նախագիծը կրկնում էր նաև նախորդի պահանջները, միայն ավելացվում էր, որ Եվրամիության անդամ-պետությունները նույնպես պետք է ձանաչեն Հայոց ցեղասպանությունը:

1 Stén Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, М., 2003, с. 816.

2 Stén նույն տեղում, էջ 676.

3 Stén **Կիրակոսյան Ա.**, Ակնարկներ Հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմությունից, Եր., 2006, էջ 184:

Ֆրանսիացի պատգամավոր ժակեն առաջարկում էր նույնիսկ պատ- ժամիջոց կիրառել Թուրքիայի նկատմամբ, մասնավորապես՝ հետաձգել Թուրքիային վերաբերող ֆինանսական արձանագրության հաստատումը, որը նախատեսված էր Եվրամիության և Թուրքիայի միջև ստորագրված ասոցացման պայմանագրով, քանի դեռ թուրքական կառավարությունը չի դադարեցնում Հայոց ցեղասպանության ժխտողականությունը և մարդու իրավունքների խախտումներն իր պետության տարածքում⁴:

Տիկին Դյուպորը բանաձևի նախագիծ ներկայացնելուց զատ, 1984 թ. մայիսի 10-ին գրավոր հարցում է անում Եվրամիության նախարարների խորհրդին, թե հնարավոր չէ՞ արդյոք, որ նախարարների խորհրդի նախագահն առաջարկի Եվրամիության անդամ 10 երկրներին, քաղաքական համագործակցության ոգուց ելնելով՝ ճանաչել 1915 թ. հայ ժողովրդի ցեղասպանությունը համատեղ հռչակագիր ընդունելու միջոցով: Եվրամիության արտաքին գործերի նախարարների խորհուրդը հուլիսի 11-ին պատասխանում է հարցմանը, որ 1915 և 1916 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, որոնք բավականին շատ մարդկային կորուստներ բերեցին հայերին, անվիճարկելի են, և Եվրամիության 10 երկրները պաշտպանում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները, ինչպես նաև փոքրամասնությունների իրավունքները, սակայն հաստատական են ահաբեկչական գործողությունները դատապարտելու հարցում՝ անկախ այն պատճառներից, որոնք ընկած են դրանց հիմքում⁵: Դժվար չէ նկատել, որ Եվրամիության արտաքին գործերի նախարարների պատասխանը բավականին «դիվանագիտական» էր, որում նախ՝ փորձ է արվում անորոշ բնորոշում տալ Հայոց ցեղասպանությանը, այն անվանելով «ողբերգական իրադարձություններ», մյուս կողմից, նման պատասխանով Եվրամիությունը շարունակում էր իրենից կախվածության մեջ պահել Թուրքիային:

Չսայած այն հանգամանքին, որ Քաղաքական հարցերով հանձնա- ժողովը արդեն իսկ քննության էր առել «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը և նույնիսկ հատուկ զեկուցողին հանձնարարել էր զեկուցում պատրաստել ու ներկայացնել՝ ի մի բերելով տվյալ հարցի վերաբերյալ Սոցիալիստների խմբակցության անդամների նախորդ բանաձևերը, 1985 թ. հունիսի 13-ին նույն խմբակցության հույն պատգամավոր Կոլոկոտրոնիսը հերթական առաջարկը ներկայացրեց Եվրախորհրդա- րանին: Ի տարբերություն նախորդների, այս նախագիծը վերնագրված էր՝ «Հայկական հարցի և ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության օր հռչակելու մասին»: Հույն պատգամավորը նախագծում առաջարկում էր Եվրամիո- թյան արտաքին գործերի նախարարների խորհրդին կոչ անել թուրքական կառավարությանը՝ ճանաչելու 1915 թ. ցեղասպանությունը և երկխոսություն սկսելու հայերի ներկայացուցիչների հետ: Բանաձևում միաժամանակ կոչ էր արվում Եվրամիության անդամ պետություններին՝ ապրիլի 24-ը հռչակել Հայոց ցեղասպանության օր և նույն խնդիրը բարձրացնել նաև

4 Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 675-676.

5 Տե՛ս նույն տեղում, էջ 677: Խոսքը 1970-ականների կեսերից ծավալված Ձինյալ պայքարի մասին է:

ՄԱԿ-ում: Իր այս առաջարկը Կոլոկոտրոնիսը հիմնավորում էր նաև նրանով, որ Սորբոնում 1984 թ. ապրիլի 13-16-ին ժողովուրդների մշտական դատարանը որոշում էր կայացրել այն մասին, որ ցեղասպանությունը վաղեմություն չունեցող միջազգային հանցագործություն է, ինչից ելնելով էլ ճանաչել ու դատապարտել էր Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ նշվում էր, որ 1984 թ. սեպտեմբերի 10-ին ԱՄՆ Կոնգրեսը ընդունել է կոնգրեսական Թոնի Կուելիոնի առաջարկը և 1985 թ. ապրիլի 24-ը հռչակել է «մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի գոհերի հիշատակի օր»⁶:

1980-ական թվականների սկզբներից հեղեղված լինելով Հայկական հարցի լուծման վերաբերյալ սոցիալիստ պատգամավորների առաջարկներով՝ Եվրախորհրդարանն ի վերջո ստիպված եղավ անդրադառնալ այդ հարցին:

Ուշադրության էր արժանի Հայկական հարցի վերաբերյալ բանաձևի վերնագրում առկա **«քաղաքական լուծում»** ձևակերպումը, որը փաստորեն շրջանցում էր իրավական լուծման հնարավորությունը: Կարծես թե հենց սկզբից որդեգրված նման ուղղվածությունը որոշակիորեն շեղել էր Եվրախորհրդարանին իր բուն նպատակից, այն է՝ հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը՝ հանցագործ պետության համար դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ակնհայտ է, սակայն, որ Հայկական հարցի քաղաքական լուծումը չի կարող բացառել դրա միջազգային-իրավական լուծումը: Ավելին՝ վերջինս անհնար է առանց հարցի քաղաքական լուծման, հաշվի առնելով միջազգային իրավունքի վրա քաղաքականության և քաղաքական գործընթացների անընդհատ ազդեցությունը:

Դրանով հանդերձ, կարծես թե դիտավորյալ, հարցն ուղղորդվել էր միայն քաղաքական ուղղությամբ, վստահվել էր Քաղաքական հարցերով հանձնաժողովին, որպեսզի իրավական ուղղությամբ ավելի խոր և կոնկրետ գործողություններ ենթադրող ուսումնասիրություններ չկատարվեն:

Ինչևէ, 1984 թ. հոկտեմբերի 23-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովը այս հարցով գումարեց առաջին նիստը, իսկ 1984 թ. նոյեմբերի 26-ին որոշվեց դրա վերաբերյալ հատուկ զեկուցում լսել: Դեկտեմբերի 20-ին հատուկ զեկուցող նշանակվեց էթնիկ փոքրամասնությունների հարցերով հայտնի մասնագետ Ժակ Վանդեմյուլբրուքը (Բելգիա): Թուրքական դիվանագիտությունը ամեն ինչ արեց, որ տվյալ հարցով զեկուցող նշանակվի Քաղաքական հարցերով հանձնաժողովի թուրքամետ անդամներից որևէ մեկը, սակայն երբ այդ փորձերը ձախողվեցին, ձգտում էր նաև ոչ պաշտոնական շփման մեջ մտնել հատուկ զեկուցողի հետ⁷: Այդ փորձերը տապալվեցին, զեկուցման հեղինակը փաստաթուղթը կազմելու ընթացքում տեղեկություններ ստանալու և կողմերի դիրքորոշումներին ծանոթանալու նպատակով միայն պաշտոնական հանդիպումներ ունեցավ և՛ հայերի, և՛ թուրքերի հետ՝ փորձելով պահպանել

6 Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1 с. 678.

7 Տես նույն տեղում, т. 2, ч. 2, М., 2005, с. 561.

անաչառությունը: Այդ իսկ պատճառով նա ենթարկվեց թուրքական պաշտոնատար անձանց և լրագրողների ուժեղ ճնշմանը: Թուրքիայի վարչապետ Թուրդու Օզալը նույնիսկ հանդես եկավ սպառնալից հայտարարությամբ⁸:

Չնայած ճնշումներին, այդուհանդերձ Ժ.Վանդեմյոլբրուքը մեկ տարի անց՝ 1985 թ. դեկտեմբերին, ներկայացրեց իր զեկույցը Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովին: Պետք է նշել, որ զեկույցում նա, այնուամենայնիվ, ընկել էր թուրքական տեսակետների որոշ ազդեցության տակ: Մասնավորապես, Աբդուլ Համիդի կառավարումը ներկայացվում էր որպես հայերի համար «համեմատաբար հանգիստ» ժամանակաշրջան՝ խուսափելով տվյալ դարաշրջանին ձգբրիտ գնահատականներ տալուց և շրջանցելով հայ բնակչության վիճակի բարելավման նպատակով Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացված մարդասիրական միջամտությունները, 1894–1896 թթ. հայկական կոտորածները, որոնց արդյունքում բնաջնջվեց շուրջ 300000 մարդ: 1909 թ. Ադանայի կոտորածը ներկայացվում էր իբրև հայ-թուրքական բախում, իսկ Հայոց ցեղասպանության ժամանակագրությունը սահմանափակվում էր 1915 թվականով՝ անտեսելով թուրքական հայաջինջ քաղաքականության շարունակությունը քենալականների կողմից, մասնավորապես 1920 թ. Կիլիկիայի և 1922 թ. Զյոնյունիայի հայության զանգվածային կոտորածները: Զեկույցման հեղինակը համառորեն չէր ցանկանում նաև տրամաբանական կապ և շարունակականություն տեսնել թուրքական տարբեր վարչակարգերի կողմից հայերի նկատմամբ իրականացված բնաջնջման ու հայրենագրման քաղաքականության մեջ:

Այդուհանդերձ, Վանդեմյոլբրուքը խիստ կարևոր տեսակետ էր հայտնում առ այն, որ թուրքական իշխանությունների գործողությունները հայերի նկատմամբ ունեցել են կանխատեսված և սիստեմատիկ բնույթ, ինչը լիովին համապատասխանում էր ցեղասպանության հանցագործության հանցակազմի հատկանիշներին: Ուստի պատահական չէ, որ զեկույցողը միանշանակորեն հանգում էր այն եզրակացությանը, որ հայերի նկատմամբ կատարված գործողությունները համապատասխանում են ցեղասպանության հանցագործությանն ըստ ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի⁹:

Զեկույցման մեջ հեղինակը, բնականաբար, չէր կարող շրջանցել նաև ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ծավալված նախորդ քննարկումները: Անդրադառնալով ՄԱԿ-ի Սարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման ու պաշտպանության ենթահանձնաժողովի նիստում հավանության արժանացած զեկույցման դրույթներին, Վանդեմյոլբրուքը նշում էր, որ եթե անգամ Հայոց ցեղասպանության դրույթը, որը թուրքական հակազդեցության պատճառով դուրս էր բերվել զեկույցման տեքստից, կրկին վերականգնվի 30-րդ պարբերության տեքստով և հավանության արժանա-

8 Տե՛ս Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 184:

9 Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 691-692.

նա ՄԱԿ-ի կողմից, ապա նման ճանաչումը մեխանիկորեն չի կարող հանգեցնել Թուրքիային պատասխանատվության կանչելուն: Խնդիրն, ըստ հեղինակի, այն էր, որ չկա հեղինակավոր մի կառույց, որն անկա միջազգային իրավունքի սահմաններում կարողանա պետության նկատմամբ քրեական գործ հարուցել հանցավոր գործողությունների համար՝ առանց այն պետության համաձայնության, որին դա վերաբերում է¹⁰:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Վանդեմյուլբրուքը ՄԱԿ-ի ենթահանձնաժողովի զեկուցման վերաբերյալ իր եզրակացությունները կատարել էր հնացած տվյալների հիման վրա, քանի որ նրա զեկուցումից ամիսներ առաջ՝ 1985 թ. օգոստոսի 29-ին ՄԱԿ-ի ենթահանձնաժողովն արդեն ընդունել էր Բ.Ուայթեթերի զեկույցը «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժելիության վերաբերյալ»: Նրա 24-րդ պարբերությունում Հայոց ցեղասպանությունը հիշատակվում էր որպես այդ հանցագործության պատմական օրինակ, և կարծում ենք, որ Վանդեմյուլբրուքը չէր կարող այդ մասին չիմանալ:

Բացի այդ, զեկուցողի դատողությունները վիճելի էին նաև բովանդակային առումով: Կան բազմաթիվ նախադեպեր, երբ առանց պետությունների համաձայնության՝ հումանիտար ինտերվենցիաներ իրականացնելով, միջազգային հանրությունը միջամտել է սուվերեն պետությունների ներքին գործերին կամ արդարադատություն է իրականացրել իրավախախտ պետության նկատմամբ: Այս տեսակետից վերջին նախադեպը հենց Նյուրնբերգի ու Տոկիոյի միջազգային տրիբունալների գործունեությունն էր, երբ Գերմանիայի ու Ճապոնիայի համաձայնությունից անկախ, դատապարտվեցին ոչ միայն գերմանացի ու ճապոնացի պատերազմական հանցագործները, այլև այն վարչակարգերը, որոնց հանցավոր գործողությունները հանգեցրել էին այդ հանցագործություններին:

Զեկուցողի կողմից առաջադրվում էր նաև այն հարցը, որ ցեղասպանության կոնվենցիայում առկա ֆիզիկական անձանց պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության պարագայում կորցնում է իր իմաստը, քանզի պատասխանատուները այլևս գոյություն չունեն: Իսկ եթե անգամ նրանք ողջ լինեին, թուրքական կողմը կարող էր օգտվել “non bis in idem” («նույն հանցանքի համար երկրորդ անգամ չեն դատում») սկզբունքից, մատնանշելով, որ թուրքական դատարանները թուրքական օրենքների հիման վրա, արդեն իսկ պատասխանատվության են ենթարկել մեղավորներին¹¹: Մինչդեռ, ինչ վերաբերում է Երիտթուրքերի դատավարությանը, ապա թուրքական ռազմական տրիբունալը երիտթուրք պարագլուխներին մեղավոր էր ճանաչել «առաջին աստիճանի» սպանություններ կատարելու, սահմանադրության մեջ ամրագրված կառավարման ձևն ու էությունը

10 Տե՛ս նույն տեղում, էջ 695: Հիշեցնենք, որ 1973 թ. սեպտեմբերի 16-ին Ժնևում տեղի ունեցած ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման ու պաշտպանության ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանում ռուանդացի հատուկ զեկուցող Ն.Ռուհաշիանկիկոն ներկայացրել էր զեկույց, որի 30-րդ պարբերությունում պատմական փաստերի շարքում հայերի նկատմամբ օսմանյան Թուրքիայում կատարվածը որակվում էր որպես «հանցագործություն, որը համարվում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

11 Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 695.

փոխելու, իշխանությունը բռնազավթելու մեջ և դրա հիման վրա նրանց նկատմամբ հեռակա կարգով մահվան վճիռ էր կայացրել¹²: Այսինքն՝ մեղավոր անձինք մահվան էին դատապարտվել ամեննին էլ ոչ ցեղասպանություն իրականացնելու մեղադրանքով, ուստի տեսականորեն երիտթուրքերին հնարավոր կլիներ պատասխանատվության ենթարկել նոր մեղադրանքով, եթե, անշուշտ, նրանք դեռևս ողջ լինեին:

Բացի դրանից՝ զեկուցման մեջ նշվում էր, որ ըստ կոնվենցիայի՝ հատուցման սկզբունքը չի տարածվում ցեղասպանության մեջ մեղադրվող ֆիզիկական անձանց վրա այն դեպքերում, երբ նրանք գործել են պետության անունից: Տվյալ պարագայում, ըստ զեկուցողի, պատասխանատվությունն ընկնում է պետության վրա: Ըստ այդմ՝ պետությունը, որն իրեն գոհ է համարում, իրավունք ունի հատուցում պահանջել այն պետությունից, որը կատարել է այդ հանցագործությունը, տվյալ դեպքում՝ Թուրքիայից: Հայ ժողովուրդը եղել է գոհ, բայց չի հանդիսացել միջազգային իրավունքի սուբյեկտ, ուստի չի կարող ներկայացնել նյութական հատուցման պահանջ, բացի այն դեպքերից կամ պարտավորություններից, որոնք թուրքական կողմը քննարկվող ժամանակաշրջանում պետք է կատարեր իր հայ հպատակների նկատմամբ: **Այս վերջին դրույթը ներկայումս ակնհայտորեն հնացած է, քանզի հայ ժողովուրդն արդեն վերականգնել է իր անկախ պետականությունը, և Հայաստանը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, կարող է ներկայացնել ու պաշտպանել հայության իրավունքները, այդ թվում՝ հատուցման հարցի հետ կապված:**

Այդուհանդերձ, զեկուցողը ցեղասպանության հանցագործության հետ կապված պետության պատասխանատվության հարցում լուրջ հեռանկարներ չէր տեսնում, պատճառ բերելով միջազգային իրավունքի ցածր զարգացման աստիճանը: Վանդեմյուլբրուքը, սակայն, չէր կարող չիմանալ, որ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի կատարելագործման հանձնաժողովում տասնամյակներ շարունակ այդ ուղղությամբ լուրջ քննարկումներ են ընթացել, նախագծեր են կազմվել, որոնք ներկայացվել են նաև Գլխավոր վեհաժողովում, սակայն, դժբախտաբար, նա այդ մասին ոչինչ չէր հիշատակում:

Այս ամենը վկայում է, որ զեկուցողն ընդամենը փորձում էր ներկայացնել մի փոխզիջումային նախագիծ, որի նպատակն էր բավարարվել լոկ հանցագործության փաստն արձանագրելով, բայց մեղավոր կողմի համար բացառելով դրանից բխող որևէ լուրջ հետևանք: Թուրքիայի նկատմամբ զգուշավոր մոտեցումը թերևս պայմանավորված էր ոչ միայն ՆԱՏՕ-ի շրջանակներում Եվրախորհրդարանի որոշ երկրների համար գործընկեր հանդիսացող երկրին ծանր վիճակի մեջ չզցելու ցանկությամբ, այլ նաև այն մտահոգությամբ, որ պետության պատասխանատվության դրույթի ամրագրման դեպքում բանաձևն առհասարակ կարող էր չընդունվել ու տապալվել հենց Քաղաքական հարցերի հանձնաժողովում՝ չհասնելով Եվրախորհրդարանի քննարկմանը:

12 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Եր., 1988, էջ 126:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ
Դ (Ժ) ԳՄՄԻ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒԿՆԵՐԵՐ-ՂԵԿՆԵՐԵՐ, 2012
ՎԷՄ համահայկական հանդես

Զեկուցողը փորձում էր Հայկական հարցի քաղաքական լուծումը հանգեցնել բացառապես Թուրքիայի կողմից տարբեր միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, այլ ոչ թե կատարված միջազգային ծանր հանցագործության համար պատասխանատվություն կրելուն:

Զեկուցման մեջ նշվում էր, որ Թուրքիան ստորագրել է փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի կոնվենցիան, վավերացրել է «Մշակութային հուշարձանների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, որով նախատեսվում է փոքրամասնությունների մշակութային հուշարձանների պահպանությունը, վերանորոգումն ու պաշտպանությունը: Զեկուցման մեջ արձանագրվում էր, որ Թուրքիայի հայկական համայնքը բազմիցս բարձրացրել է հայկական հուշարձանների՝ Հայոց պատրիարքարանի իրավասությանը փոխանցելու հարցը, սակայն անարդյունք: Մինչդեռ կարելի էր հուշարձանները փոխանցելով Հայոց պատրիարքարանին՝ նրա վրա դնել նաև դրանց պահպանությունը, ինչը պետք է կատարվեր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ¹³: Այս հանգամանքի արձանագրումը զեկուցման մեջ վկայում է, որ թուրքական իշխանությունների կողմից հայկական հուշարձանների պահպանության և խնամքի ջանքերը գնահատվում էին խիստ անբավարար:

Ուստի զեկուցման հեղինակը եզրակացնում էր, որ Հայկական հարցը չի կարող ունենալ միջազգային-իրավական հետևանքներ, այլ կարող են դրվել միայն բարոյական պահանջներ: Ելնելով այս եզրակացությունից՝ նշվում էր, որ Եվրամիության 12 անդամ-երկրները պետք է ՄԱԿ-ում միասնական դիրքորոշմամբ հանդես գան և հասնեն նրան, որ Մարդու իրավունքների հանձնաժողովը Հայոց ցեղասպանության հարցը ներառի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կատարելագործմանն ուղղված իր զեկույցում, քանզի այդ հանձնաժողովը հարմար հարթակ է, որպեսզի տեղի ունեցած իրադարձություններից 70 տարի անց հնարավոր լինի հասնել Հայկական հարցի քաղաքական լուծմանը:

Եզրակացության մեջ ակնհայտ միտում էր նկատվում՝ հարցի լուծումը ուղղակիորեն թողնելու ՄԱԿ-ի Մարդու իրավունքի հանձնաժողովի հայեցողությանը, խուսափելով սեփական իրավական դիրքորոշման հստակ արտահայտումից: Սակայն Եվրամիության Քաղաքական հարցերով հանձնաժողովի անդամների մի մասը չհամաձայնեց նույնիսկ նման փոխզիջումային տարբերակով զեկուցողի արտահայտած որոշ տեսակետների հետ:

«Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» զեկույցումը Քաղաքական հարցերով հանձնաժողովը քննարկեցին 1985 թ. սեպտեմբերի 25-ի և 1986 թ. հունվարի 22-ի նիստերում, իսկ 1986 թ. փետրվարին հարցի քննարկումը հետաձգվեց՝ հանձնաժողովի անդամների կողմից տեքստում բազմաթիվ ուղղումներ մտցնելու պատրվակով: Ընդ որում՝ 32 ուղղում-

¹³ Տե՛ս Геносид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 696..

ներից 21-ը թրքամետ բնույթ ունեին և ներկայացվել էին ԳՖՀ-ի և Դանիայի պատգամավորների կողմից¹⁴:

Այս դիտողություններն ու ուղղումները անընդունելի էին համարում արտաքին գործերի նախարարների քաղաքական համագործակցությանը նվիրված նիստի մակարդակով 1915 թ. պատմական իրադարձությունները որպես Հայոց ցեղասպանություն ճանաչելու պահանջը: Վերևում նշված երկրները ներկայացնող հանձնաժողովի անդամները, ավստոսանք հայտնելով հայ ժողովրդի հետ պատահած «ողբերգության» ու «անարդարության» կապակցությամբ, այնուամենայնիվ, գտնում էին, որ կատարված իրադարձությունները չեն համապատասխանում «ցեղասպանություն» եզրույթին¹⁵: Հանձնաժողովի որոշ անդամներ նաև պնդում էին, որ Եվրախորհրդարանի հայտարարությունը կարող է դառնալ հայտարարություն պատմական հարցերի հետ կապված, ինչը տվյալ մարմնի իրավասությունների մեջ չի մտնում: Ու քանի որ Եվրախորհրդարանը տեղեկացված չէ այդ հարցերի վերաբերյալ պատմական հետազոտություններին, ուստի աննպատակահարմար է նման հայտարարությամբ հանդես գալը:

Հանձնաժողովի որոշ անդամներ նաև այն տեսակետն էին հայտնում, թե իբր՝ գեկուցողը թերացել է՝ կանգ առնելով միայն Թուրքիայի վրա, մինչդեռ բացի Թուրքիայից, հայերի կյանքը առավել ուշադրության է արժանի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իրանը, որտեղ հայոց լեզուն և հայկական հանրակրթական դպրոցները ճնշումների են ենթարկվում: Ավելին, հանձնաժողովի անդամները գտնում էին, որ հայերը Խորհրդային Միությունում պետք է պահպանեն իրենց ինքնատիպությունը, սակայն նրանք շարունակում են տուժել անհատի իրավունքների ու ազատությունների խախտումներից և այլն¹⁶:

Այս վերջին դիտարկումներում, անշուշտ, օբյեկտիվության որոշակի տարրեր կային, սակայն ակնհայտ էր, որ տվյալ դիտողությունները նպատակ էին հետապնդում ոչ թե պաշտպանել հայերի իրավունքներն ու շահերը Իրանում կամ ԽՍՀՄ-ում, այլ շեղում էին ուշադրությունը բուն խնդրից՝ Թուրքիայում հայերի ծանր դրությունից, ինչը Հայկական հարցի լուծված չլինելու ուղղակի հետևանքն էր: Ի վերջո՝ ցանկության դեպքում Եվրախորհրդարանը կարող էր առանձին բանաձև ընդունել Իրանում, ԽՍՀՄ-ում և այլ երկրներում հայերի դրության ու նրանց իրավունքների պաշտպանության մասին: Այս լրացումներով միանշանակ փորձ էր կատարվում մեղմել Թուրքիային ուղղված մեղադրանքները, ցույց տալով, որ հայերի իրավունքները ոտնահարվում են նաև այլ երկրներում, ինչը պետք է որոշ առումով թուլացներ Թուրքիայի նկատմամբ կոշտ դիրքորոշումը:

Իսկ առարկայական բնույթ ունեցող առաջարկների ու դիտողությունների շարքում պետք է նշել այն իրողությունը, որ փաստաթղթում հղում էր

14 Տե՛ս Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 185:

15 Տե՛ս Геносид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 697.

16 Տե՛ս Геносид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 698.

կատարվում Լոզանի պայմանագրով ոչ մահմեդական փոքրամասնությունների ինքնության պահպանման հետ կապված Թուրքիայի ստանձնած պարտավորությունների վրա և առաջ էր քաշվում այն պնդումը, որ թուրքական իշխանությունները պետք է ավելի լավ պաշտպանեն հայկական կրոնական ճարտարապետական հուշարձանները: Հանձնաժողովն այս առումով նշում էր նաև, որ Եվրամիության և Թուրքիայի միջև կնքված ասոցացման պայմանագրի դրույթներով նախատեսված է քրիստոնեական մշակույթի հուշարձանների պահպանությունն ու վերականգնումը: Ի վերջո՝ քննարկումների արդյունքում զեկուցողը ստիպված եղավ որոշ շտկումներ կատարել բանաձևի նախագծում, ինչը այն դարձրեց էլ ավելի անորոշ:

Նույն հարցին նվիրված հանձնաժողովի նիստեր տեղի ունեցան նաև 1986 թ. մարտի 19-ին և հունիսի 26-ին: Զեկուցման ընդունման հակառակորդները ձգտում էին անգամ թույլ չտալ նրա քննարկումը՝ հիմնվելով արարողակարգային դրույթների վրա: Սակայն նոյեմբերի 27-ին նրանց բողոքները մերժվեցին Եվրախորհրդարանի ընդլայնված բյուրոյի որոշմամբ: Իսկ 1987 թ. փետրվարի 25-ին զեկուցման նախագիծն ընդունվեց անվանական քվեարկությամբ. կողմ՝ 25, դեմ՝ 23, ձեռնպահ՝ 2 ձայների հարաբերակցությամբ: Քվեարկության արդյունքներից դժվար չէ հասկանալ, որ զեկուցումն ընդունվել էր բուռն ու անզիջում քննարկումների մթնոլորտում: 1987 թ. ապրիլի 15-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովի անուսից հատուկ զեկուցող Ժ. Վանդեմյոլբրուքը զեկուցման վերջնական տարբերակը և դրան կցված բանաձևի նախագիծը ներկայացրեց Եվրախորհրդարանին:

2. Բանաձևի ընդունումը

Պետք է նշել, որ Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերի հանձնաժողովի զեկուցողի ուսումնասիրությունում և դրան կցված՝ բանաձևի նախագծի փոփոխված տեքստում ամրագրվել էին այնպիսի դրույթներ, որոնք զգալիորեն աղավաղում էին նախնական տարբերակը: Օրինակ՝ Եվրախորհրդարանին ներկայացված բանաձևի նախագծի տեքստում հաշվի էր առնվել այն «դիտողությունը», թե իբր՝ թուրք պատասխանատու պաշտոնյաները դեպքերի կատարման պահին չեն ունեցել հայ բնակչությանը բնաջնջելու մտադրություն, ինչը «գենոցիդի» հանցակազմի կարևոր բաղադրիչներից է, ինչպես նաև ներառվել էին պաշտոնական թուրքական հայտարարություններն առ այն, որ 1915 թ. դեպքերը ճանաչվում են իբրև մեծ ողբերգություն, որը տառապանքներ բերեց Օսմանյան կայսրության տարբեր ազգությունների միլիոնավոր մարդկանց և նկատի ունենալ, որ դեպքերի որակումն իբրև ցեղասպանություն չի կարող ունենալ իրավական հետևանքներ: Դրանից ելնելով, նախագծի համաձայն, Եվրախորհրդարանը եզրակացնում էր, որ ինքը՝

1. ցավում է այն անարդարությունների համար, որոնք կատարվել են հայ ժողովրդի նկատմամբ 1915 թվականին,

2. գիտակցելով անցյալի այդ տառապանքները՝ պաշտպանում է հայերի ցանկությունը՝ զարգացնելու իրենց ինքնատիպությունը և համաձայն թուրքական սահմանադրության, առանց մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման, փոքրամասնությունների իրավունքների ապահովումը¹⁷:

Իբրև նման ակնհայտ թուրքամետ գնահատականի հիմնավորում հանձնաժողովի բանաձևի նախագծում ընդգծված կերպով առաջ էին մղվում հայերի ձեռնարկած ահաբեկչությունների փաստերը:

Այսպիսով, Քաղաքական հարցերի հանձնաժողովը բանաձևի իր նախագծում հայերի նկատմամբ կատարված հանցագործությանը չէր տալիս պատշաճ ձևակերպում և ընդամենը կրկնում էր թուրքական ժխտողական վարկածի դրույթները՝ «մեծ ողբերգության», «անարդարությունների», «դժբախտությունների» և այլնի մասին:

Անշուշտ, այս զարգացումներին հետևում էր նաև եվրոպական հասարակայնությունը, ինչպես նաև ֆրանսահայ համայնքը, որը փորձեց ներազդել «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման վրա: 1987 թ. հունիսին «Ֆրանս-հայկական համերաշխություն» հասարակական կազմակերպությունը Եվրախորհրդի պատգամավորներին կոչ էր անում ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր հայերի նկատմամբ¹⁸: Կոչի տակ ստորագրել էին մեծ հեղինակություն վայելող այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին՝ գրողներ Ֆրանսուազ Սագանը, Էժեն Իոնեսկուն և Անրի Թրուայան, երգիչ Շարլ Ազնավուրը, պատմաբան Իվ Թերնոնը, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Անդրեյ Լվոֆն ու Լուի Նոելը և շատ ուրիշներ:

Ի վերջո բանաձևը մտցվեց Եվրախորհրդարանի 1987 թ. հունիսի 15-19-ի նիստի օրակարգ: Նիստի ընթացքում «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման օգտին համատեղ առաջարկությամբ հանդես եկան համայնավարական և սոցիալիստական խմբակցությունները, ինչի արդյունքում 1987 թ. հունիսի 18-ին 68 «կողմ» և 60 «դեմ» ձայների հարաբերակցությամբ Եվրախորհրդարանն ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Չայների նման հարաբերակցությունը վկայում էր, որ փաստաթուղթն ընդունվել է լուրջ հակադեմոկրատիայի պայմաններում:

3. Ընդունված բանաձևի բովանդակային քննությունը

Հատկանշական է, որ հենց բանաձևի **նախաբանի** դրույթներում, որոնցով հիմնավորվում են փաստաթղթի ընդունման շարժառիթներն ու անհրաժեշտությունը, նկատվում են հակասություններ: Մի կողմից նախաբանում նշվում է, որ պատմականորեն ապացուցված Հայոց ցեղասպանությունը մինչև տվյալ պահը չի ենթարկվել ո՛չ քաղաքական դատապարտման և ո՛չ էլ ստացել է համապատասխան հատուցում, մյուս կողմից՝

17 Стену Геносид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 674-675.

18 Стену **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 185:

որպես հարցի լուծման տարբերակ՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է իբրև հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը: Այսինքն՝ բանաձևում, անգամ քաղաքական լուծման համատեքստում, Հայկական հարցի հանգուցալուծումը սահմանափակվում է միայն բարոյականության շրջանակներում, ինչը քաղաքականության մեջ բավական հայեցողական հասկացություն է, քանզի քաղաքական գործընթացներում ամեն երկիր առաջնորդվում է սեփական բարոյական նորմերով:

Մյուս կողմից՝ բանաձևում անուղղակիորեն ակնարկվում է հանցագործության շարունակականության հանգամանքի վրա, քանզի նախաբանում նշվում է, որ «թուրքական կառավարությունը, մերժելով մինչ օրս ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, այդպիսով շարունակում է հայ ժողովրդին զրկել իր սեփական պատմության իրավունքից»¹⁹: Դատապարտելով հանդերձ հայկական խմբավորումների «անիմաստ ահաբեկչությունները», նախաբանում հատուկ նշվում է, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից դա նույնպես չի ընդունվում, բայց սրա պատճառը Եվրախորհրդարանը տեսնում է նաև «Հայկական հարցի նկատմամբ, իրար հաջորդող թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշման մեջ, ինչը ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը»²⁰:

Ի տարբերություն Քաղաքական հարցերի հանձնաժողովի բանաձևի նախագծի, Եվրախորհրդարանի ընդունած բանաձևի **երկրորդ** հոդվածով արձանագրվում է, որ «Օսմանյան կայսրության մեջ հայ բնակչության հանդեպ 1915–1917 թվականներին գործադրված ողբերգական իրադարձությունները, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9–ին ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի, հանդիսանում են ցեղասպանություն»²¹: Դրանից ելնելով՝ **երրորդ** հոդվածով Եվրախորհրդից պահանջվում է ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915–1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով՝ նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև: Այս կետը փաստորեն ամբողջությամբ կրկնում է հույն սոցիալիստ պատգամավոր Կոլկոտրոնիսի բանաձևի նախագծի դրույթը: Սակայն միևնույն ժամանակ նշվում է նաև, որ ժամանակակից Թուրքիան չի կարող պատասխանատու համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և պատմական իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն չի կարող առիթ հանդիսանալ արդի Թուրքիային քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի ներկայացման

19 European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

20 Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984–1987թթ.), կազմող և առաջաբանի հեղինակ **Լ.Ա.Քարսեղյան**, Եր., 1998, էջ 46:

21 Տե՛ս European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

համար²²: Այս դրույթը թերևս միտված էր հանգստացնելու թուրքական կողմին, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը իր համար ունենալու է միայն բարոյական հետևանքներ, սակայն, ինչպես հետագայում պարզվեց, անգամ նման ձևակերպումը չբավարարեց թուրքերին, որոնք սկսեցին բողոքել բանաձևի դեմ:

Չորրորդ հոդվածով արձանագրվում են Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու հստակ նախապայմանները: Բացի հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության ճանաչումից, իբրև անդամակցության նախապայմաններ թվարկվում են նաև Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարվելու, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքեր պահելու, ինչպես նաև քուրդ փոքրամասնության իրավունքները խախտելու, ժողովրդավարության բացակայության և կրոնական ազատությունների ոտնահարման փաստերը²³:

Բանաձևի **վեցերորդ** և **յոթերորդ** հոդվածները Թուրքիայից պահանջում են արդարացի վերաբերմունք ցուցաբերել այդ երկրում բնակվող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթական հաստատությունների նկատմամբ: Բացի այդ՝ պահանջվում է միջոցներ ձեռնարկել պատմական հուշարձանների ու մասնավորապես՝ հայ կրոնական ճարտարապետության կառույցների պահպանման ու խնամքի ուղղությամբ: Վերջին դրույթի արձանագրումը հիմնավորվում է նաև Եվրախորհրդի մշակույթային հարցերով նախարարների խորհրդակցության արդյունքում 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունված որոշմամբ, որը վերաբերում էր Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանմանը, ներառյալ՝ Եվրամիության երկրների տարածքից դուրս գտնվող հուշարձանները²⁴: Միաժամանակ հիշեցվում է, որ Թուրքիայի Հանրապետությունը դեռևս 1923 թվականին Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածներով, վերը նշված հարցերի հետ կապված, արդեն իսկ ստանձնել է որոշակի պարտավորություններ: Տվյալ պարագայում Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի, իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածների հիշեցումը պետք է դիտարկել իբրև Թուրքիայի ստանձնած պարտավորությունների չկատարման փաստի արձանագրում այն երկրների կողմից, որոնք ստորագրել են Լոզանի պայմանագիրը: Բանաձևում այս դրույթի ամրագրմամբ Լոզանի պայմանագիրը ստորագրած մյուս երկրները փաստորեն օգտվում էին տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող Թուրքիային իր ստանձնած պարտավորությունների մասին հիշեցնելու և դրանց կատարման վրա պնդելու իրավունքից:

Բանաձևի **տասներորդ** և **տասնմեկերորդ** հոդվածներում, այնուամենայնիվ, անդրադարձ էր կատարվում Իրանում և ԽՍՀՄ-ում հայերի իրավունքների պաշտպանության հարցերին, ինչը պետք է համարել որոշակի

22 Տե՛ս Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման, կազմող և առաջաբանի հեղինակ **Լ.Ա. Բարսեղյան**, Եր., 2004, էջ 49:

23 Տե՛ս նույն տեղում:

24 Տե՛ս Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987 թթ.), էջ 10:

շեղում բանաձևի բուն նպատակից:

Չափազանց կարևոր էր **տասներեքերորդ** հոդվածը, որով կոչ է արվում Եվրամիության անդամ-երկրներին սահմանել 20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների զոհերի հիշատակի հատուկ օր, մասնավորապես այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները²⁵: Այս դրույթով, փաստորեն, հայերի ու հրեաների նկատմամբ կատարված զանգվածային կոտորածները մասնավորեցվում ու նույնականացվում են իբրև ցեղասպանություն և մարդկության դեմ կատարված հանցագործություն, և, բացի այդ՝ պահպանվում է հանցագործությունների իրագործման հստակ հերթականությունը:

Վերջապես բանաձևի 14-րդ հոդվածը նախատեսում է փաստաթղթի պաշտոնական փոխանցումը Եվրախորհրդին, Եվրամիության անդամ-պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդին, «Եվրամիություն-Թուրքիա» համագործակցության խորհրդին, Թուրքիայի, Իրանի և ԽՍՀՄ կառավարություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին²⁶:

4. Բանաձևի ընդունմանը հաջորդած զարգացումները

Գնահատելով Եվրախորհրդարանի ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը՝ պետք է նշել, որ փաստաթղթի տեքստից հնարավոր եղավ դուրս թողնել ակնհայտ թուրքամետ ձևակերպումները, որոնք աղավաղում էին խնդրո առարկան: Չնայած այն հանգամանքին, որ 1987 թվականին ընդունված այս բանաձևում նույնպես առկա են որոշ հակասական ձևակերպումներ, այդուհանդերձ, այն միջպետական միջազգային կառույցի կողմից ընդունված առաջին պաշտոնական փաստաթուղթն է, որով Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները ճանաչվում են որպես ցեղասպանություն՝ ըստ ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի սահմանման, ինչը բացակայում էր Քաղաքական հարցերով հանձնաժողովի ներկայացրած նախագծում:

Բանաձևի ընդունումից անմիջապես հետո թուրքական կառավարությունը պաշտոնական հայտարարություն հրապարակեց, որը տարածվեց Եվրամիությանն առընթեր թուրքական մշտական պատվիրակության կողմից: Նրանում բանաձևը բնութագրվում էր իբրև «կողմնակալ» ու «ռասիստական» փաստաթուղթ, որը չի ընդունվում թուրքական կառավարության կողմից²⁷: Թուրքական պաշտոնական արձագանքին հետևեց նաև «ոչ պաշտոնականը»: 1987 թ. օգոստոսի 10-ին ամերիկյան «Թայմ» շաբաթա-

25 Stn European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag /pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

26 Stn նույն տեղում:

27 Stn **Կիրակոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 187:

թերթում հրապարակվեց թուրքական 13 կազմակերպությունների «Ուղերձը Եվրախորհրդարանի անդամներին», որում կրկնվում էին ցեղասպանության ժխտողականության թուրքական պետական մոտեցումները: Դրա հիման վրա կարելի է պնդել, որ թուրքական կազմակերպությունների «Ուղերձը...» ընդամենը այդ երկրի պաշտոնական պատասխանի հավելվածն էր և պատվիրված էր պետական մարմինների կողմից: Ամբողջ աշխարհը կրկին ականատես եղավ, որ թուրքական կողմն անգամ Հայկական հարցի կիսալուծում առաջարկող բանաձևը համարում է իր համար վտանգավոր և անընդունելի:

Հայաստանի անկախության հռչակումից հետո էլ Հայոց ցեղասպանության հարցը շարունակեց մնալ Եվրախորհրդարանի օրակարգում: Սակայն պետք է նշել, որ տվյալ հարցը եվրոպական այս կառույցի կողմից ընդամենն օգտագործվում էր Թուրքիայի դեմ և այն մեկ ներառվում էր Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու նախապայմանների շարքում, մեկ անհետանում:

Այսպես, 1998 թ. հունիսի 16-ին Եվրախորհրդարանի լիագումար նիստում ֆրանսիացի և հույն պատգամավորներն առաջարկեցին օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, սակայն ձայների մեծամասնություն չապահովելու պատճառով առաջարկը չընդունվեց: 2000 թ. նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանը, լսելով «Թուրքիայի առաջընթացը Եվրամիության անդամակցության ճանապարհին» խորագրով գեկուցումը, 234 «կողմ» և 213 «դեմ» ձայների հարաբերակցությամբ ընդունեց հռչակագիր, որի տասներորդ հոդվածով կոչ է անում Թուրքիայի կառավարությանը, Ազգային մեծ ժողովին լրացուցիչ ջանքեր գործադրել հայ փոքրամասնության՝ իբրև թուրքական հասարակության մի մասնիկի, իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, մասնավորապես՝ ցեղասպանության հրապարակային ճանաչման միջոցով, ինչին ենթարկվել է այդ փոքրամասնությունը նախքան ժամանակակից թուրքական պետության առաջացումը²⁸: Հռչակագրում թվարկված են Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հետ կապված՝ վերջինիս առջև դրված նախապայմանները, որոնց թվում **քսաներորդ** կետում նշված է նաև բոլոր հարևանների հետ հարաբերությունների կարգավորման հարցը, իսկ **քսանմեկերորդ** կետով հատուկ ամրագրված է Հայաստանի հետ երկխոսություն սկսելու հանգամանքը, որն ուղղված է լինելու դիվանագիտական և առևտրական բնականոն հարաբերությունների հաստատմանը և առկա շրջափակման վերացմանը²⁹: Սակայն 2001 թ. հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանը ձայների 149 «կողմ», 275 «դեմ» հարաբերակցությամբ կրկին մերժեց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն իբրև այդ երկրի՝ Եվրամիությանն անդամակցելու նախապայման դիտարկող դրույթը:

2002 թ. փետրվարի 28-ին, լսելով «Կանաչների» խմբակցության շվեյցարացի պատգամավոր Պիեր Գարտոնի պատրաստած «Կովկասյան

28 Տե՛ս Геносид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 816.

29 Տե՛ս նույն տեղում:

զեկուցագիրը» և ելնելով Հարավային Կովկասի ու Եվրամիության հարաբերություններից, ինչպես նաև գործընկերության ու համագործակցության պայմանագրի դրույթներից, Եվրախորհրդարանը ընդունել է բանաձև, որով կրկին վերահաստատել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչող իր 1987 թ. հունիսի 18-ի բանաձևը և կոչ է արել Թուրքիային՝ քայլեր ձեռնարկել հաշտության հասնելու համար³⁰: Եվրախորհրդարանը միաժամանակ քննարկել է լիբերալ-ժողովրդավարական խմբակցության անդամ, բրիտանացի պատգամավոր Էնդրյու Դաֆի և Եվրամիություն-Թուրքիա հարաբերությունների նախկին համակարգող Ալան Լամասուրի «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը շրջանցող թուրքամետ այլընտրանքային նախագիծը, որը մերժվել է 96 «կողմ», 391 «դեմ», 15 «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ:

2006 թ. սեպտեմբերի 4-ին Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն ձայների մեծամասնությամբ ընդունել է մի զեկույց, որով կոչ է արել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կրկին դիտարկել որպես նախապայման՝ Եվրամիությանն անդամագրվելու համար:

Հայոց ցեղասպանության հիմնահարցի նկատմամբ եվրոպական այս կառույցի **զիզգազային քաղաքականությունը** պայմանավորված է ոչ միայն հերթական ընտրություններից հետո նրա ներսում տեղի ունեցող՝ ուժերի հարաբերակցության պարբերական փոփոխություններով և Թուրքիայում որոշ եվրոպական երկրների ունեցած տնտեսական շահերով, այլև որոշ առումով նաև Հայաստանի դիվանագիտական պասիվությամբ, քանզի տվյալ հարցի քննարկումներն, ըստ էության, ընթանում են առանց անմիջական շահագրգիռ կողմի մասնակցության:

Այս իմաստով կարելի է արձանագրել, որ Հայաստանի անկախացումից և Եվրախորհրդին անդամակցումից հետո որոշ ակտիվացում սկսեց նկատվել մասնավորապես Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայոց ցեղասպանության հարցի արծարծման իմաստով: Այսպես, 1998 թ. ապրիլի 24-ին Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մի խումբ պատգամավորներ ընդունեցին հռչակագիր, որում նշվում էր, որ 1915 թ. ապրիլի 24-ը համարվում է Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման նպատակ հետապնդող ծրագրի իրականացման սկիզբը: Փաստաթղթում այնուհետև նշվում էր, որ հայերի զանգվածային սպանությունները համարվում են 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, և անհրաժեշտ է հարգել այն հայ նահատակների հիշատակը, ովքեր դարձան մարդկության դեմ կատարված այդ հանցագործության զոհերը³¹: Հռչակագրի տակ ստորագրել էին ինչպես Հայոց ցեղասպանությունը ճանաչած, այնպես էլ դեռևս չճանաչած շուրջ 20 երկրներից 51 պատգամավորներ, որոնք վեհաժողովում ներկայացնում էին Սոցիալիստների, Եվրոպական ժողովրդական կուսակցության, Դեմոկրատական և Բարեփոխումների խմբակցությունները:

2001 թ. ապրիլի 24-ին ԵԽԽՎ պատգամավորներն ընդունեցին նոր

30 Տե՛ս նույն տեղում, էջ 837:

31 Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 746.

կոնկրետ կազմակերպությունների ընթացակարգային հնարավորություններին:

- Եվրախորհրդարանում Հայոց ցեղասպանության շուրջ 25 տարի առաջ ծավալված քննարկումներն ու ընդունված բանաձևը հայկական դիվանագիտության կողմից պետք է օգտագործվեն իբրև լավ նախատեպ՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման հարցն այլ միջազգային կառույցներում բարձրացնելու և պաշտպանելու համար:

- Եվրոպական կառույցների ուշադրությունը անընդհատ պետք է ուղղել Թուրքիայի կողմից «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի դրույթների չկատարման վրա և պահանջել՝ այդ հարցը ներառելու Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու նախապայմանների շարքում:

- Այս առումով հարկ է օգտագործել նաև Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչած երկրների ու միջազգային կազմակերպությունների ներուժը և ստեղծել միասնական ձևակառուցված Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացն ընդհանրապես կասեցնելու համար:

Summary

COURSES OF THE RESOLUTION "ON THE POLITICAL SOLUTION TO THE ARMENIAN QUESTION"

On the occasion of the 25th anniversary of European Parliament's decision on June 18, 1987

Armen Ts. Maruqyan

The official international organizations' assessments of the crime have a great importance for the Armenian Genocide international recognition. The cases of the resolution "concerning the issue of the Armenian question" which have been adopted as a result of discussions in European council in 1980 are very significant in this regard. The adopted resolution concerning Armenian Genocide was the result of the unsystematic and desperate struggle of the Armenian diaspora's different structures and certain individuals.

Under the circumstances of independent statehood, when Armenia is an international entity, full member of UNO and European Council, the previous discussions about the Armenian Genocide recognition and the adopted resolution should be used as precedent by the Armenian diplomacy to raise the question of the Armenian Genocide condemnation and its consequences' overcoming in other international structures.